60°. Մարասայ (5) Ս. Գրիգորի վանք։

61°. Արցախայ վանքն, 'ի նոյն կողմն 'ի հարաւոյ (*)։

62°. 63°. 64°. Այլ երեք վանք Աղվանից, զոր Տաճիկք ունին այժմ։

65°. 66°. 67°. (6) Երեք վանք եւս դոն 'ի մէջ քաղաքին շինեալք։

68°. Տաղրացւոց վանքն յանուն Ս. Գէորգայ Յարչակունեաց շինեալ։

69°. 70°. 71°. 72°. Եւ այլ չորս վանք մեծամեծ 'ի մէջ քաղաքին շինեալ 'ի Մամիկոնէից, որոց բովանդակն եօթանասուն և երկու վանօրայս լինին շինեալք յիշխանաց մերոց 'ի Ս. Քաղաքն Երուսաղէմ։

Այլ (*) և Աստուածակոչ Ս. Տնօրինական տեղիքն Քրիստոսի Տեառն մերոյ, նա եւս զմեծամեծ եկեղեցիսն, զՍ. Մնուանդն, զՍ. Գողգոթայն, զԱստուածընկալ Ս. Գերեզմանն, զՀամբարձման Ոտնատեղին, զՍ. Յակոբ, զՀրեշտակապետն, զՓրկիչն, զՁաւներն, զՄաչ Գիւտն, զեկեղեցի Ս. Լուսաւորչի 'ի ժամանակս Կոստանդեայ և Տրդատայ Ս. Թադեւորայն շինեալք հաստատեցան 'ի պէտս

---

(5) Մարասայ վանք Ս. Գրիգոր. այժմ ունի կին մի Գրիգորի անուն. և զկեան ունի Տաճիկ։

(*) Ի մէջ եկեղեցւոյն Անգղնացւոց և կալուածոց Ս. Յակոբայ 'ի վերայ փողոցի է տուն ինչ այլազգւոյ Տէրէ կոչեցեալ, որ զմեռեալս իւրեանց թաղէն 'ի բակի անդ, և մի մասն սորա խառնեալ 'ի տունս Հայոց։ Զայս տեղի Մով. Կող. կոչէ Արցախայ վանք Ս. Աստուածածնայ հերաց և Ս. Ստեփաննոսի. այժմ Տաճիկ ունի զամենայն։ Իսկ Լատինք կոչեն պոռն խողոքեր խանոյ, կամ էնէղէոյ յանուն նոցա. և յարեւելս սոյն տան է պարտեզն 'ի ձեռս Հայոց, որ էր յառաջագոյն կալուած այլազգւոյ սրբոյն, զոր Արաբացիք կոչեն Եաֆոռ էլ Աձէմ։

(6) Այլ երեք վանք Աղուանից զոր Տաճիկք ունին բռնութեամբ, անուանքն չեն յայտ։ Միւս եւս այլ վանք Աղուանից ընդ Առաւենից վանօքն որ 'ի շուկամէջն է, զոր այժմ Տաճիկք ունին։ Այսոքիքն առնախանձու հայրապետքն Երուսաղէմի խանգարեցին զՀայոց և զԱղուանից անդ ձեռնադրութիւն 'ի վանօրէիցն զի 100 և աւելի վանք, որք կան անդ, զորոց փոյթ կալեալ իշխանացն Հայոց 7 Կենարիսար տուեալ Թադեւորին Յուստինոսի, որ է 70.000 դահեկան, թափեցին 'ի բռնութենէ հայրապետացն զամենայն վանօրայսն, ապա յետոյ յանհոգանալոյ մերոցս ամենեքեան այլազգեցան։ Կողանիայ. 424։

(*) Այս հատուած 'ի վերջոյ գրեալ է։